# ՈՒԵՖԱ-Ի ԳԱՎԱԹ

## ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՒԼ

# UEFA CUP

## QUALIFYING ROUND

# 12.08.1999

FC YEREVAN

1995

**«ԵՐԵՎԱՆ»**

Երեւան,
Հայաստան

**FC YEREVAN**

Yerevan, Armenia

הפועל
KETER
תל-אביב

**«ՀԱՊՈԷԼ»**

Թել Ավիվ,
Իսրայել

**HAPOEL**

Tel Aviv, Israel

«ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՐԶԱԴԱՇՏ
ՍԿԻԶԲԸ 19:00-ԻՆ

HRAZDAN STADIUM
KICK OFF 19:00

נסרק עם CamScanner

# Լեւոն Հարությունյան. «ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆԵԼՈՒ ԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՊԱՏԻՎԸ ԲԱՐՁՐ ՊԱՀԵՆՔ»

«Իսրայելական «Հապոէլը» բավականին ուժեղ թիմ է, ատլետիկ, արագ եւ տեխնիկապես հասուն: Մենք լավ գիտենք, որ մեր թիմի համար դժվար է լինելու: Ռեալ գնահատում ենք, բայց իրենց ուժը մեզ չի վախեցնում եւ չեմ կարծում, թե մեր թիմի վիճակն անհույս է: «Երեւանն» էլ ունի մեծ ներուժ:

Գիտենք, որ «Հապոէլը» մեծ նշանակություն է տալիս ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությանը եւ ամենայն լրջությամբ է նախապատրաստվել մեզ հետ հանդիպմանը: Մենք ունենք Իսրայելի գավաթի խաղարկության եզրափակիչ հանդիպման տեսագրությունը, որում «Հապոէլը» հաղթել եւ տիրել է պատվավոր մրցանակին: Թել Ավիվի թիմն ունի մի քանի լեգեոներներ, որոնք մեծ ուժ են ներկայացնում: Հաշվի առնելով թիմերի իրական ուժը՝ ես հնարավորությունները գնահատում եմ 45-ը 55-ի՝ հօգուտ իսրայելցիների: Բայց 45 տոկոսը մեզ համար քիչ չէ արդյունքի հասնելու համար: Սա ֆուտբոլ է եւ կհաղթի այն թիմը, որը տվյալ խաղին լավ նախապատրաստված կլինի: Բոլոր դեպքերում, ինձ մոտ այն նախազգացումը կա, որ այս տարի, վերջապես, մենք կարող ենք հաղթահարել առաջին փուլի արգելը եւ մտնել ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության հիմնական մրցաշար: Մենք ամեն ինչ անելու ենք, որպեսզի հայկական ֆուտբոլի պատիվը բարձր պահենք, որպեսզի կարողանանք, վերջապես, հաշվարկային միավոր բերել մեր երկրին: Ցավոք, 2 տարի է, ինչ մեր թիմերը եվրոպական ասպարեզում ոչ մի միավոր չեն վաստակում, դրանում նաեւ մեր մեղքը կա: Այնպես որ, մենք պարտք ենք հայ ֆուտբոլասերին եւ լի ենք վճռականությամբ՝ գոնե այս տարի արդարացնենք հույսերը:

Թիմը նախապատրաստվել է լրջորեն: Վերջին մեկ ամսվա ընթացքում նախապատրաստական շրջափուլն այնպես է տարվել, որպեսզի «Երեւանը» եվրոպական հանդիպումներին ներկայանա լավ մարզավիճակում: Մեզ պետք է նաեւ հանդիսատեսի աջակցությունը:

«Երեւան» է վերադարձել Տիգրան Եսայանը, որն արդեն երկարաժամկետ պայմանագիր է կնքել ակումբի հետ: «Զվարթնոցի» ղեկավարները ընդառաջել են մեզ եւ թիմ ենք հրավիրել Արթուր Քոչարյանին: Դարպասապահի խնդիրը, կարելի է ասել, լուծված է: Ռուսաստանցի Վասիլի Կուզնեցովը բավականին հետաքրքիր եւ խոստումնալից դարպասապահ է: Պաշտպանությունում մենք առանձնապես խնդիրներ չունենք: Այսօրվա խաղում, իհարկե, շատ բան կախված կլինի կիսապաշտպաններից: Հարձակման գծում էլ մտահոգություն չկա: Եվ Մարսելոն եւ Վարազդատ Ավետիսյանը բավականին լավ մարզավիճակում են: Մեծ թիվ են կազմում նաեւ վրացի խաղացողներըՄի խոսքով, կազմի լավ ընտրություն ունենք: Մնում է՝ մի քիչ էլ մարզական բախտը ժպտա մեզ»:

ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Երեւան» ակումբի հիմնադիր

# UEFA CUP 1999-2000

## Qualifying Round

(August 12 and 26)

| | | | |
|---|---|---|---|
| Shakhtar Donetsk (UKR) | - | Sileks Kratovo (MAC) | .... : .... |
| HJK Helsinki (FIN) | - | Shirak Gyumri (ARM) | .... : .... |
| Lokomotivi Tbilisi (GEO) | - | Linfield (NIL) | .... : .... |
| Sheriff Tiraspol (MOL) | - | SK Sigma Olomouc (CZE) | .... : .... |
| FC Yerevan (ARM) | - | Hapoel Tel-Aviv (ISR) | .... : .... |
| Neftchi Baki (AZE) | - | Crvena Zvezda Beograd (YUG) | .... : .... |
| KS Vllaznia Shkoder (ALB) | - | Spartak Trnava (SVK) | .... : .... |
| BATE Borisov (BLS) | - | Lokomotiv Moskva (RUS) | .... : .... |
| FC Lantana Tallinn (EST) | - | Torpedo Kutaisi (GEO) | .... : .... |
| Metalurgs Liepaja (LAT) | - | Lech Poznan (POL) | .... : .... |
| HIT Gorica (SLO) | - | Inter CableTel Cardiff (WAL) | .... : .... |
| FK Vojvodina Novi Sad (YUG) | - | Ujpesti TE (HUN) | .... : .... |
| JK Tulevik Viljandi (EST) | - | Club Brugge KV (BEL) | .... : .... |
| Belshina Bobruisk (BLS) | - | Omonia Lefkosia (CYP) | .... : .... |
| Kryvbas Kryvy Ryh (UKR) | - | FK Shamkir (AZE) | .... : .... |
| KI Klaksvik (FAR) | - | Grazer AK (AUT) | .... : .... |
| FK Riga (LAT) | - | Helsingborgs IF (SWE) | .... : .... |
| VPS Vaasa (FIN) | - | St.Johnstone (SCO) | .... : .... |
| Inter Slovnaft (SVK) | - | KS Bylis Ballshi (ALB) | .... : .... |
| FK Bodo/Glimt (NOR) | - | FC Vaduz (LIE) | .... : .... |
| Viking FK Stavanger (NOR) | - | CE Principat (AND) | .... : .... |
| Maccabi Tel-Aviv (ISR) | - | FBK Kaunus (LIT) | .... : .... |
| Steaua Bucuresti (ROM) | - | FC Levadia Maardu (EST) | .... : .... |
| Lyngby FC (DEN) | - | Birkirkara (MLT) | .... : .... |
| Ankaragucu (TUR) | - | B36 Torshavn (FAR) | .... : .... |
| Sliema Wanderers (MLT) | - | FC Zurich (SUI) | .... : .... |
| Grasshopper-Club Zurich (SUI) | - | Bray Wanderers (IRL) | .... : .... |
| IFK Goteborg (SWE) | - | Cork City (IRL) | .... : .... |
| FC Mondercange (LUX) | - | Dinamo Bucuresti (ROM) | .... : .... |
| Vardar Skopje (MAC) | - | Legia Warszawa (POL) | .... : .... |
| APOEL Lefkosia (CYP) | - | Levski Sofia (BUL) | .... : .... |
| RSC Anderlecht (BEL) | - | Leiftur (ISL) | .... : .... |
| SCT Olimpija Ljubljana (SLO) | - | Kareda Siauliai (LIT) | .... : .... |
| Hajduk Split (CRO) | - | F91 Dudelange (LUX) | .... : .... |
| Cwmbran Town (WAL) | - | Celtic (SCO) | .... : .... |
| Portadown (NIR) | - | CSKA Sofia (BUL) | .... : .... |
| Ferencvarosi TC (HUN) | - | Constructorul Chisinau (MOL) | .... : .... |
| KR Reykjavik (ISL) | - | Kilmarnock (SCO) | .... : .... |

נסרק עם CamScanner

## «ԵՐԵՎԱՆ» Հայաստան

## YEREVAN Armenia

FC YEREVAN 1995

| Դարպասապահներ / Goalkeepers | |
|---|---|
| Վաղարշակ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ / Vagharshak SHAHNAZARYAN | 01.03.1971 |
| Վասիլի ԿՈՒԶՆԵՑՈՎ / Vasili KOUZNETSOV | 24.08.1978 |
| Հայկ ԴԱՆԻԵԼՅԱՆ / Hayk DANIELYAN | 12.07.1977 |
| Արմեն ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ / Armen HOVHANNISYAN | 15.09.1975 |
| **Պաշտպաններ / Defenders** | |
| Արկադի ԴՈԽՈՅԱՆ / Arkadi DOKHOYAN | 12.08.1977 |
| Արսեն ԱՅՎԱԶՅԱՆ / Arsen AYVAZYAN | 26.04.1975 |
| Հակոբ ՄԿՐՅԱՆ / Hakob MKRYAN | 28.08.1972 |
| Հայկ ԲԱԲԱՅԱՆ / Hayk BABAYAN | 10.08.1974 |
| Գրիգոր ՄԿՐՏՉՅԱՆ / Grigor MKRTCHYAN | 04.01.1972 |
| Արմեն ՊԵՏԻԿՅԱՆ / Armen PETIKYAN | 19.02.1972 |
| Արմենակ ԳԱԼՍՏՅԱՆ / Armenak GALSTYAN | 02.02.1972 |
| Էլդարի ԳՎԱՍԱԼԻԱ / Eldari GVASALIA | 15.03.1972 |
| **Կիսապաշտպաններ / Midfilders** | |
| Գաբրիել ԼԱԴՈՒՍ / Gabriel LADOUCE | 05.08.1980 |
| Կարեն ԴՈԽՈՅԱՆ / Karen DOKHOYAN | 06.10.1976 |
| Արա ՆԻԳՈՅԱՆ / Ara NIGOYAN | 27.10.1968 |
| Արթուր ՔՈՉԱՐՅԱՆ / Artur KOCHARYAN | 14.09.1974 |
| Ալբերտ ԱՃԵՄՅԱՆ / Albert ACHEMYAN | 15.09.1976 |
| Սեյրան ՊՈՂՈՍՅԱՆ / Seiran POGHOSYAN | 19.06.1970 |
| Տիգրան ԵՍԱՅԱՆ / Tigran YESAYAN | 02.06.1972 |
| **Հարձակվողներ / Forwards** | |
| Էմիլ ԱՎԴԱԼՅԱՆ / Emil AVDALYAN | 08.12.1977 |
| Վարազդատ ԱՎԵՏԻՍՅԱՆ / Varazdat AVETISYAN | 11.10.1972 |
| Մամուկա ԱՊՑԻԱՈՒՐԻ / Mamuka APTSIAURI | 09.10.1969 |
| Պաատա ԳԱՄՑԵՄԼԻԱՁԵ / Paata GAMTSEMILADZE | 06.01.1974 |
| Կախա ԳՈԳՈԼԱՁԵ / Kakha GOGOLADZE | 04.02.1968 |
| Ալեխանդրո Մարսելո ԴԵՎԱՆԻ / Alejandro Marcelo DEVANI | 30.06.1976 |
| Դմիտրի ՊԱՐԱՄՈՆՈՎ / Dmitri PARAMONOV | 02.08.1980 |
| **Գլխավոր մարզիչ / Head Coach** | |
| Արմենակ ՍԱՐԳՍՅԱՆ / Armenak SARGSYAN | |

## «ՀԱՊՈԵԼ» Իսրայել

## HAPOEL Israel

### Դարպասապահներ / Goalkeepers

1. Շավիտ ԷԼԻՄԵԼԵԽ / Shavit ELIMELECH
22. Նիր ՌԱՀՄԻՆ / Nir RAHMIN

### Պաշտպաններ / Defenders

2. Իսրայել ԿՈՀԵՆ / Israel COHEN
3. Յակով ՀԻԼԵԼ / Yakkov HILLEL
4. Մոտի ՕՀԱՅՈՆ / Moti OHAION
5. Շիմոն ԳԵՐՇՈՆ (ավագ) / Shimon GERSHON (c)
18. Օմրի ԱՖԵԿ / Omri AFEK
14. Շալոմ ՏԻԿՎԱ / Shalom TIKVA
21. Իլան ԲԱԽԱՐ / Ilan BAKHAR
20. Իգալ ԱՆՏԵԲԻ / Igal ANTEBI

### Կիսապաշտպաններ / Midfilders

7. Դան ՌԱՉՈՒՆԻՑԱ / Daen RACUNICA
8. Դավոր ՌՈՒՊՆԻԿ / Davor RUPNIK
9. Իշտվան ՊԻՇՈՆՏ / Istvan PISHONT
17. Իալ ԲԵՆ ԱՄԻ / Eyal BEN AMI
19. Պինի ԲԱԼԻԼԻ / Pini BALILI
24. Ցիյաո ԿԲԱԴԱ / Jijao KBADA

### Հարձակվողներ / Forwards

10. Ռոնեն ՀԱՐԱԶԻ / Ronen HARAZI
15. Սալիմ ԹՈԵՄԱ / Salim TOEMA
11. Կֆիր ՈՒԴԻ / Kfir UDI
27. Սեբաստյան ՍԻՄԻՐՈՏԻՉ / Sebastjan CIMIROTIC

### Գլխավոր մարզիչ / Head Coach

Դրոր ԿԱՇՏԱՆ / Dror KASHTAN

### ՄՐՑԱՎԱՐՆԵՐ / REFEREE

Վոլֆգանգ ՍՈՎԱ (Ավստրիա) / Wolfgang SOWA (Austria)
Ռոման ԿՈԼՄԱՆ (Ավստրիա) / Roman KOLMAN (Austria)
Քրիստիան ՎԵՐՇԻՉՆԻԿ (Ավստրիա) / Cristian WERSCISCHNIC (Austria)
Յոհան ԱԼՄԵՐ (Ավստրիա) / Johan ALMER (Austria)

נסרק עם CamScanner

# «ԵՐԵՎԱՆԸ» ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Այսօր, «Երեւանը» երրորդ անգամ դուրս կգա եվրոպական մրցասպարեզ: Նախորդ երկու փորձերը մեր թիմի համար անհաջող էր:

**«ԴՆԵՊՐ» (Դնեպրոպետրովսկ, Ուկրաինա) - «ԵՐԵՎԱՆ» (Երեւան, Հայաստան)՝ 6-1 (1-0)**

*23.07.1997, Դնեպրոպետրովսկ, «Մետեոր» մարզադաշտ:*
*5500 հանդիսական: Մրցավար՝ Ռոյ Հելգե ՕԼՍԵՆ (Նորվեգիա):*

«ԴՆԵՊՐ»: Իլյա ԲԼԻԶՆՅՈՒԿ, Ալեքսանդր ՊՈԿԼՈՆՍԿԻ, Դմիտրի ՊԱՐՖԵՆՈՎ, Գենադի ԿՈԶԱՐ, Իվան ՊԱՎԼՅՈՒԽ, Իգոր ԽԱՐԿՈՎՇԵՆԿՈ, Սերգեյ ՄԻԶԻՆ, Իվան ԳԵՑԿՈ (Վաուլամ ԿԻԼԱՍՈՆԻԱ 87), Ալեքսանդր ՊԱԼՅԱՆԻՑԱ (Գեորգի ԿԻԼԱՍՈՆԻԱ, 78), Գենադի ՄՈՐՈԶ (Սերգեյ ԿՈՎԱԼԵՑ, 82), Վլադիմիր ՇԱՐԱՆ:

«ԵՐԵՎԱՆ»: Պասկալ ՌՈՒՍՈ, Ֆելիքս ԽՈՋՈՅԱՆ, Էրիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Կարեն ԳՐԻԳՈՐՅԱՆ (Արկադի ԴՈԽՈՅԱՆ, 21), Դեդե ԹԱՄԲՈՒՐԱ (Կարեն ԴՈԽՈՅԱՆ, 80), Տիգրան ԵՍԱՅԱՆ, Երվանդ ԿՐԲԱՇՅԱՆ, Ռազմիկ ԳՐԻԳՈՐՅԱՆ, Արմեն ՄԱՐԿՈՍՅԱՆ (Արմեն ՍԱՀԱԿՅԱՆ, 70), Արթուր ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ն'Զիյայ ՄԱԼԱԼ:

*Գոլեր*՝ Իվան ԳԵՑԿՈ (31), Վլադիմիր ՇԱՐԱՆ (55), Ալեքսանդր ՊԱԼՅԱՆԻՑԱ (60), Վլադիմիր ՇԱՐԱՆ (62), Գենադի ՄՈՐՈԶ (72), Վլադիմիր ՇԱՐԱՆ (74), Ն'Զիյայ ՄԱԼԱԼ (81):
*Զգուշացումներ*՝ Դեդե ԹԱՄԲՈՒՐԱ (35), Ն'Զիյայ ՄԱԼԱԼ (39):

**«ԵՐԵՎԱՆ» (Երեւան, Հայաստան) - «ԴՆԵՊՐ» (Դնեպրոպետրովսկ, Ուկրաինա)՝ 0-2 (0-1)**

*30.07.1997, Երեւան, «Հրազդան» մարզադաշտ:*
*500 հանդիսական: Մրցավար՝ Մարտին ԻՆԳՎԱՐՍՈՆ (Շվեդիա):*

«ԵՐԵՎԱՆ»: Պասկալ ՌՈՒՍՈ, Կարեն ԴՈԽՈՅԱՆ, Աբրահամ ԽԱՇՄԱՆՅԱՆ (Արմեն ՊԵՏԻԿՅԱՆ, 75), Արկադի ԴՈԽՈՅԱՆ (Արմեն ՄԱՐԿՈՍՅԱՆ, 62), Դեդե ԹԱՄԲՈՒՐԱ, Արմեն ՍԱՀԱԿՅԱՆ, Երվանդ ԿՐԲԱՇՅԱՆ, Ռազմիկ ԳՐԻԳՈՐՅԱՆ, Տիգրան ԵՍԱՅԱՆ, Ն'Զիյայ ՄԱԼԱԼ, Արթուր ՊԵՏՐՈՍՅԱՆ:

«ԴՆԵՊՐ»: Իլյա ԲԼԻԶՆՅՈՒԿ, Սերգեյ ՆԱԳՈՐՆՅԱԿ (Վիտալի ԴԱՑԻՇԻՆ, 86), Դմիտրի ՊԱՐՖԵՆՈՎ (Վիկտոր ԲԵԼԿԻՆ, 80), Գենադի ԿՈԶԱՐ, Իվան ՊԱՎԼՅՈՒԽԱ, Իգոր ԽԱՐԿՈՎՇԵՆԿՈ, Սերգեյ ՄԻԶԻՆ, Իվան ԳԵՑԿՈ, Ալեքսանդր ՊԱԼՅԱՆԻՑԱ (Ալեքսանդր ԿՈՎԱԼԵՆԿՈ, 74), Գենադի ՄՈՐՈԶ, Վլադիմիր ՇԱՐԱՆ:

*Գոլեր*՝ Իվան ԳԵՑԿՈ (41), Ալեքսանդր ԲԵԼԿԻՆ (89):
*Զգուշացումներ*՝ Դմիտրի ՊԱՐՖՅՈՆՈՎ (24), Ն'Զիյայ ՄԱԼԱԼ (35), Գեննադի ՄՈՐՈԶ (76):
*Հեռացումներ*՝ Ռազմիկ ԳՐԻԳՈՐՅԱՆ (88), Իգոր ԽԱՐԿՈՎՇՐԵՆԿՈ (88), Ն'Զիյայ ՄԱԼԱԼ (89):

**ՀԻԿ (Հելսինկի, Ֆինլանդիա) - «ԵՐԵՎԱՆ» (Երեւան, Հայաստան)՝ 2-0 (0-0)**

*22.07.1998, Հելսինկի, «Օլիմպիական» մարզադաշտ:*
*Մրցավար՝ Ռոլանդ ԲԵԿ (Լիխտենշտեյն):*

ՀԻԿ: Տոմի ԿՈՅՎԻՍՏՈՅՆԵՆ, Առնո ՏՈՒՐՊԻՆԵՆ, Վիլլ ՆՅՈՒԼՈՒՆԴ, Յարի ԻԼՈԼԱ, Յարի ՅԱՎԱՅԱ (Շեֆքի ԿՈՒՔԻ, 71), Վեսա ՎԱՍԱՐԱ (Միքայել ՖՈՐՍԵԼ, 79), Էրկա ԼԵՀՏՈԼԱ (Պետեր ԿՈՊՏԵՖ, 41), Յարկո ՎԻՍ, Մարկու ԿԱՆԵՐՎԱ, Միկա ԿՈՏԻԼԱ, Միկա ԼԵՀԿՈՍՏՈՒՈ:

«ԵՐԵՎԱՆ»: Հարություն ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Վարդան ԽԱՉԱՏՐՅԱՆ (Կարեն ԳՐԻԳՈՐՅԱՆ, 75), Գուգլիելմո ՉԵԿՈՒՏԻ, Արամայիս ՏՈՆՈՅԱՆ, Արթուր ՄԿՐՏՉՅԱՆ, Լեւոն ՍՏԵՓԱՆՅԱՆ, Սուրեն ՉԱԽԱԼՅԱՆ (Արմեն ՍԱՀԱԿՅԱՆ, 65), Արա ՆԻԳՈՅԱՆ, Տիգրան ԵՍԱՅԱՆ (Արմեն ՄԱՐԿՈՍՅԱՆ, 78), Ֆիլիպ ԲԱՐՈ, Ռեժիս Քրիստիան ԳԱՐՈ:

*Գոլեր*՝ Յարկո ՎԻՍ (50), Շեֆկի ԿՈՒՔԻ (80):
*Զգուշացումներ*՝ Սուրեն ՉԱԽԱԼՅԱՆ (31), Արամայսի ՏՈՆՈՅԱՆ (63), Գուգլիելմո ՉԵԿՈՒՏԻ (71):

**«ԵՐԵՎԱՆ» (Երեւան, Հայաստան) - ՀԻԿ (Հելսինկի, Ֆինլանդիա)՝ 0-3 (0-2)**

*29.07.1998, Երեւան, «Հրազդան» մարզադաշտ:*
*Մրցավար՝ Հանս Յուրգեն ՎԵԲԵՐ (Գերմանիա):*

«ԵՐԵՎԱՆ»: Հարություն ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Վարդան ԽԱՉԱՏՐՅԱՆ, Արամայիս ՏՈՆՈՅԱՆ, Արթուր ՄԿՐՏՉՅԱՆ (Կարեն ԳՐԻԳՈՐՅԱՆ, 33), Լեւոն ՍՏԵՓԱՆՅԱՆ, Սուրեն ՉԱԽԱԼՅԱՆ (Արմեն ՄԱՐԿՈՍՅԱՆ, 39), Արա ՆԻԳՈՅԱՆ, Տիգրան ԵՍԱՅԱՆ, Գուգլիելմո ՉԵԿՈՒՏԻ, Ֆիլիպ ԲԱՐՈ, Ռեժիս Քրիստիան ԳԱՐՈ (Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, 57):

ՀԻԿ: Տոմի ԿՈՅՎԻՍՏՈՅՆԵՆ, Առնո ՏՈՒՐՊԻՆԵՆ, Վիլլ ՆՅՈՒԼՈՒՆԴ, Յարմո ՍԱՍՏԱՄՈՅՆԵՆ, Յարի ՅԱՎԱՅԱ (Գուստավո ՄԱՆԴՈՒԿԱ, 79), Վեսա ՎԱՍԱՐԱ (Պետեր ԿՈՊՏԵՖ, 73), Յարկո ՎԻՍ, Մարկու ԿԱՆԵՐՎԱ, Ակի ՌԻՀԻԼԱՀՏԻ, Միկա ԿՈՏԻԼԱ (Շեֆքի ԿՈՒՔԻ, 71), Միկա ԼԵՀԿՈՍՏՈՒՈ:

*Գոլեր*՝ Միկա ԼԵՀԿՈՍՈՈՒ (1, 79 11մ), Յարի ՅԱՎԱԼԱ (28):
*Զգուշացումներ*՝ Սուրեն ՉԱԽԱԼՅԱՆ (24), Միկա ԿՈՏԻԼԱ (38), Վարդան ԽԱՉԱՏՐՅԱՆ (67), Արա ՆԻԳՈՅԱՆ (70): *Հեռացում*՝ Արամայիս ՏՈՆՈՅԱՆ (77):

# «ԵՐԵՎԱՆԻ» ԵՐՐՈՐԴ ՓՈՐՁԸ



«Երեւանն» վերջին 4 տարվա ընթացքում երրորդ անգամ է դուրս գալիս եվրոպական ասպարեզ: Մեր թիմի նախորդ երկու փորձերն անհաջողության մատնվեցին: 1997/98 թթ. մրցաշրջանում «Երեւանը» ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության նախնական փուլում հանդիպեց ԽՍՀՄ եւ Ուկրաինայի ամենաhեղինակավոր թիմերից մեկին՝ Դնեպրոպետրովսկի «Դնեպրին»: Ավելի քան 60 տարվա կենսագրություն ունեցող ակումբը, որը ԽՍՀՄ տարիներին երկու անգամ դարձել է չեմպիոն, հեշտությամբ առավելության հասավ երեւանցիների նկատմամբ: Դնեպրոպետրովսկում տեղի ունեցած առաջին հանդիպումն ավարտվեց 6-1 հաշվով, հօգուտ դաշտի տերերի: Նման ջախջախիչ արդյունք ոչ մեկը չէր կարող կանխատեսել: «Երեւանը», որը լավ համալրում էր ստացել եւ լուրջ նախապատրաստություն անցել Ֆրանսիայում, անսպասելիորեն, ընդամենը մի քանի րոպեի ընթացքում, իրար հետեւից գոլեր բաց թողեց, որն էլ անլուծելի դարձրեց ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունում նրանց խնդիրները: 1997 թ. «Երեւանը» նվաճեց Հայաստանի չեմպիոնի կոչումը եւ 1998-99 թթ. մրցաշրջանում իրավունք ստացավ Հայաստանը ներկայացնել Չեմպիոնների գավաթի խաղարկությունում: Ցավոք, այստեղ նույնպես պատմությունը կրկնվեց: Երեւանցիները ֆինական ՀԻԿ-ի հետ երկու խաղում էլ պարտություն կրեցին եւ դուրս մնացին հետագա պայքարից:

Հիմա էլ, «Երեւանին» լուրջ մրցակից է բաժին ընկել: Թել Ավիվի «Հապոէլը» իսրայելական ամենաhեղինակավոր թիմերից մեկն է ու բազմիցս է հաղթել այդ երկրի առաջնություններում եւ գավաթի խաղարկություններում: Նախորդ տարիների պես, «Երեւանը» եվրագավաթներից առաջ թիմը համալրում է արտասահմանցի խաղացողներով: Այս անգամ «Երեւանում» ֆուտբոլային մեծ դեսանտ է իջել Վրաստանից, որոնց թվում է նաեւ Վրաստանի հավաքականի նախկին խաղացող Գախա Գոգոլաձեն: Արգենտինացի Ալեխանդրո Մարսելո Դեւանին «Երեւանի» լավագույն ձեռքբերումներից է: Չի բացառվում, որ արգենտինացի այդ ֆուտբոլիստը նաեւ հանդես գա Հայաստանի ազգային հավաքականում: Այդ ուղղությամբ ՀՖՖ-ն համապատասխան աշխատանքներ է տանում:



נסרק עם CamScanner




נסרק עם CamScanner